ՏԵՂԵԿԱՆՔ

2021 թվականի հունիսի 30-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի փոփոխվող հոդվածների մասին

Հոդված 267. Դատական նիստի դռնբացությունը

1. Դատական նիստին ներկա անձինք իրավունք ունեն կատարելու գրառում, իսկ դռնբաց դատական նիստին ներկա անձինք՝ նաև ձայնագրում: Դատական նիստի ընթացքի տեսագրումը, տեսաձայնագրումը, լուսանկարումը կամ հեռարձակումը թույլատրում է դատարանը՝ մեղադրյալի համաձայնությամբ: Մեղադրյալի համաձայնության դեպքում դատական նիստի ընթացքի տեսագրումը, տեսաձայնագրումը, լուսանկարումը կամ հեռարձակումը կողմերի կարծիքը լսելուց հետո դատարանի որոշմամբ կարող է արգելվել, եթե դա է պահանջում արդարադատության շահը:

2. Կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ հանրության ներկայացուցիչների և լրատվության միջոցների մասնակցությունը դատական նիստին կամ դրա մի մասին դատարանի որոշմամբ կարող է արգելվել, եթե հրապարակայնության սկզբունքի արդարացված սահմանափակումն անհրաժեշտ է ապահովելու համար՝

1) մասնավոր կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը.

2) անչափահասի լավագույն շահի պաշտպանությունը.

3) վարույթին ներգրավված անձի կամ նրա մերձավորի անվտանգությունը.

4) պետական~~, ծառայողական~~ կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պաշտպանությունը:

3. Եթե դռնփակ դատական նիստ անցկացնելու հարցը պահանջում է քննարկում միայն կողմերի մասնակցությամբ, ապա հարցը քննարկվում է դռնփակ դատական նիստում:

4. Դատարանը բոլոր դեպքերում հրապարակում է դռնփակ դատական նիստ անցկացնելու մասին որոշումը, ինչպես նաև դրա հիմքերը:

5. Վարույթին ներգրավված անձանց հետ մեկտեղ դռնփակ դատական նիստին դատարանի թույլտվությամբ կարող են ներկա լինել նաև այլ անձինք: Դատարանն իրավասու է դռնփակ դատական նիստին ներկա անձանց նախազգուշացնելու դրա ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկությունների հրապարակման անթույլատրելիության մասին: